ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ

# ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՃԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՄԱՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱԶՄԱՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ժ0.00.01 – «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

**Գիտական ղեկավար՝** հոգեբանական գիտությունների դոկտոր ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՎԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

հոգեբանական գիտությունների դոկտոր ԱՍՅԱ ՍՈՒՐԵՆԻ ԲԵՐԲԵՐՅԱՆ

հոգեբանական գիտությունների թեկնածու ԿԱՐԻՆԵ ԱՐԱՄԻ ՍԱՀԱԿՅԱՆ

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. ապրիլի 1-ին, ժամը $12^{00}$-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մարտի 1-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Կ. Ե. Վարդանյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Հասարակական կյանքի արմատական փոփոխություններն արտահայտվում են նաև կրթական համակարգում, ապագա մասնագետների ձևավորմանը միտված տարաբնույթ գործընթացներում:

Կրթական համակարգի բովանդակային փոփոխությունները համադրելի են ապագա մասնագետների ուսումնական գործունեության նոր կողմնորոշիչների հետ՝ ուսումնառողների շրջանում մտածողության տարբեր ոճեր ձևավորելու և դրանց զարգացնելու պայմաններում: Այս համատեքստում բարձրագույն կրթության արդիականացումը միտված է ապագա մասնագետների կրթության որակի ապահովմանը, առաջին հերթին մտածողության ոճերի ակտիվացմանը, դրանցից նպատակամետ օգտվելու ինտելեկտուալ կարողությունների բացահայտմանը, բնականաբար նաև մասնագիտական և անձնային աճին, ընդհանուր առմամբ ուսանողների ճանաչողական կարողությունների հետագա զարգացմանը:

Հոգեբանական այդ հիմնախնդիրներն օրգանապես կապված են կրթության սուբյեկտների կողմից բուհական կրթության որակի էական բարձրացման անհրաժեշտությունը գիտակցելու հետ: Ուսանողների անձնային և մասնագիտական զարգացումը ենթադրում է ուսանողների ինտելեկտուալ զարգացման նոր հնարավորությունների բացահայտում, գործնական աշխատանքներում իմացական նոր հնարքների արդյունավետ մշակում և ներդրում:

Ուսումնական նյութի իմաստավորված ընկալմանը և լիարժեք հասկացմանը միտված հոգեբանական նոր ուղիների բացահայտումը, մտավոր ներուժից օգտվելու հնարավորությունների որոնումն առավելապես կապված են ինչպես հոգեկան գործընթացներից արդյունավետ օգտվելու ուսանողի պատրաստվածությունից, այնպես էլ ուսումնական ծրագրերի յուրացման մատչելիությունից և ուսուցման արդի տեխնիկական միջոցների նպատակամետ կիրառումից: Բոլոր դեպքերում ուսումնական կամ գիտական նյութի մշակումը, պահպանումն ու հետագա վերարտադրությունը ինչպես դպրոցում, այնպես էլ բուհում վերածվում է առաջնահերթ խնդրի, որի լուծումն էապես կախված է ուսանողների մտածողության ոճերի ընտրության առանձնահատկություններից:

Մասնագիտական առկա գրականության մեջ մտածողության ոճերը տարբեր անվանումներով (կառավարման ոճ, գիտական ոճ, հոգեբանական ոճ, մանկավարժական ոճ և այլն) ուսումնասիրվում են ինքնատիպ մասնագիտական հարցեր լուսաբանելու նպատակով: Սակայն չեն բացահայտվել մտածողության ոճերի առանձնահատկություններն իմացական ակտիվության ոլորտում, հատկապես իմացական խնդիրների բազմատարբերակային լուծման գործընթացում: Թեմայի արդիականությունը հիմնավորվում է մտածողության ոճերի առանձնահատկությունների բացահայտմանը միտված հետազոտական խնդիրների առաջադրման և դրանց լուծման առաջնահերթության գիտակցման իրողություններով:

**Հետազոտության օբյեկտը** տեսական և փորձարարական եղանակներով ապագա մասնագետի կողմից տեղեկատվական տարբեր աղբյուրներից ձեռք

բերված տեղեկույթի կուտակման, ստացման կամ հավաքագրման, մշակման և ներկայացման գործընթացներն են:

**Հետազոտության առարկան** ուսումնաիմացական խնդիրների բազմատարբերակային լուծման եղանակների ընտրությամբ պայմանավորված մտածողության ոճերի առանձնահատուկ դրսևորման գործընթացներ ն են:

**Հետազոտության նպատակն է՝** ուսումնասիրել ապագա մանկավարժի մտածողության ոճերը տարաբնույթ իմացական խնդիրներ լուծելիս և բացահայտել մտածողության ոճերի դրսևորման առանձնահատկություններն ու հնարավոր փոփոխությունները բակալավրիատում:

**Հետազոտության գիտական վարկածը:** Ենթադրվում է, որ մտածողության ոճերի նպատակամետ ընտրության և կիրառման պայմաններում կմեծանա տեղեկույթի որոնմանն ուղղված գերակա գործողության (կամ գործողությունների) նշանակությունը, կհեշտանա իմացական խնդիրների այլընտրանքային լուծման հնարավորությունը, նշանակալի կդառնա համակցական ոճի գործառույթը՝ ուսումնական նյութի կամ առաջադրանքի ընկալման, հասկացման, յուրացման, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը միտված գործընթացներում:

**Հետազոտության խնդիրները:**

1. Պարզաբանել մտածողության ոճերի առանձնահատկություններն ուսումնաիմացական խնդիրներ լուծելիս:
2. Ուսումնասիրել մտածողության տարբեր ոճերի առանձնահատկությունները ուսումնաիմացական բնույթի խնդիրներ լուծելիս՝ նախապատվությունը հատկապես տալով տվյալ ոճում առկա գերակա գործողության ընտրությանը և կիրառմանը:
3. Հավաստող (կամ արձանագրող) գիտափորձով բացահայտել հումանիտար և բնագիտական մասնագիտություններ ընտրած մանկավարժ-ուսանողների մտածողության ոճերի առկա դրսևորումները տարաբնույթ ուսումնաիմացական խնդիրներ լուծելիս:
4. Մշակել և ներդնել մտածողության ոճերի կիրառմանն ուղղված ուսուցողական հատուկ ծրագրեր և ցույց տալ դրանց ներդրման արդյունավետությունը բուհական կրթական համակարգում՝ ուսումնաիմացական խնդիրներ լուծելիս:
5. Ստուգողական գիտափորձերի արդյունքներով հաստատել մտածողության տարբեր ոճերի կիրառման դրական ազդեցությունն առաջադրանքի կամ խնդրի արդյունավետ լուծման գործընթացի վրա:

**Հիմնախնդրի մշակվածության աստիճանը:** Մասնագիտական գրականության մեջ տեսական և փորձարարական հետազոտություններում մտածողության ոճերն ուսումնասիրվում են վերլուծական տարբեր հիմքերով, որոնք հիմնականում կարելի է խմբավորել՝ ըստ բնագավառի, տարաբնույթ կապերի, տեղեկույթի մշակման կարգի, մտավոր ընդունակության և ստեղծարարության:

**Հետազոտության տեսական հիմքերը:**

1) Մտածողության ոճերը ուսումնասիրվում են կոնկրետ գործունեության տեսանկյունով (կառավարման ոճ, գիտական ոճ, հոգեբանական ոճ, մանկավարժական ոճ և այլն):

2) Մտածողության ոճերի, անձնային գծերի, անձնային հատկությունների և մասնագիտական գործունեության կապերի տեսանկյունով (Օ.Ս. Անիսիմով, Մ.Մ. Բերուլավա, Ա.Վ. Բրուշլինսկի, Գ.Գ. Դանիլենկովա, Վ.Ս. Կարապետյան, Ն.Վ. Կուզմինա, Ե.Վ. Կուպրինա, Լ.Ն. Մակարովա և այլոք):
3) Մտածողության ոճերն ընդհանուր առմամբ դիտարկվում են որպես տեղեկատվության կուտակման, պահպանման և հաղորդման եղանակներ (Ե.Լ. Գրիգորենկո, Ռ.Ջ. Ստերնբերգ, Լ.Լ. Գուրովա, Լ.Պ. Դերներ, Վ.Ս. Կարապետյան և այլոք):
4) Մտածողության ոճերը՝ որպես մտավոր ընդունակության բաղադրիչ, ենթակա են չափման՝ ինտելեկտուալ ակտիվության ցուցանիշներով (Հ. Այզենկ, Ռ. Ամտխաուեր, Ռ. Ատախանով, Ա. Բինե, Ե. Վասյուկովա, Պ. Գալպերին և այլոք):
5) Մտածողության ոճերը որպես ինտեգրալ ստեղծարար մտածողության դրսևորում (Ժ.Ս. Ջանդոսովա, Լ.Յա. Դորֆման, Օ. Դոսնոն, Տ.Ա. Դրոնովա, Վ.Ն. Դրուժինին, Վ.Ն. Կոզլենկո և այլոք):

**Հետազոտության գիտական նորույթը:** Ապացուցվում է, որ մանկավարժական մասնագիտություններ ընտրած ուսանողների մտածողության ոճերի դինամիկ համակարգը՝ որպես տեղեկատվության ստացման, կուտակման և մշակման գործողությունների ամբողջականություն և ընդհանրացվածություն, ունի ինքնատիպ դրսևորումներ՝ կախված ոչ միայն մտածողության գերակա ոճից, անձնային գծերից, այլև տվյալ իմացական խնդրի բնույթից, բովանդակությունից:

**Հետազոտության տեսական նշանակությունը:** Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ մտածողության ոճերի առանձնահատկությունների բացահայտմամբ ավելի կառավարելի կդառնան տեղեկույթի ստացման, մշակման և հաղորդման գործընթացները, քանի որ կառանձնացվեն դրանցում ընդգրկված գործողությունների համակազմը, որի նպատակամետ կիրառմամբ կմեծանա իմացական խնդիրների բազմատարբերակային լուծման հնարավորությունը: Մտածողության ոճերի առանձնահատկությունների պարզաբանմամբ կընդլայնվեն անհատական ոճի մասին պատկերացումները, կվերահսկվեն և կգնահատվեն իմացական գործունեության ընթացքը, կմեծանա ուսումնական նյութի վրա ինքնուրույն աշխատելու մտավոր կարողությունը:

**Ատենախոսության գործնական նշանակությունը:** Ատենախոսության փորձարարական արդյունքների ներդրումն էական փոփոխություններ կմտցնի բուհական կրթական համակարգում, ուսումնական նյութի յուրացման գործընթացում՝ ի հաշիվ մտածողության ոճերի ճիշտ ընտրության և կիրառման: Բացի դրանից, մտածողության ոճերի առանձնահատկություններից ելնելով՝ արդյունավետ կկազմակերպվեն ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքները՝ հատկապես կուրսային և ավարտական աշխատանքներ իրականացնելիս:

**Հետազոտության մեթոդաբանությունը և մեթոդները:** Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել Լ.Վիգոտսկու, Պ. Բլոնսկու կուլտուր-պատմական մոտեցումները մարդու հոգեկան զարգացման գործընթացում, Ռ. Ստերնբերգի ինտելեկտի և անձի փոխհամաձայնությամբ պայմանավորված ինտելեկտուալ ոճերի հայեցակարգը, Ա. Հարրիսոնի և Ռ.

Բրէնսոնի առաջարկած ինտելեկտուալ ոճերի գաղափարը, Ջ. Գիլֆորդի, Մ. Բեռնշտեյնի, Ս. Տորրենսի, Կ. Ռոջերսի ուսումնասիրությունները ստեղծարարության հարցի վերաբերյալ և այլն: Վերոնշյալ մոտեցումները, տեսական դրույթները, ուսուցման հիմնական սկզբունքները, պահանջներն ու մեխանիզմները հիմք են հանդիսացել գիտահետազոտական աշխատանքի հետագա ռազմավարությունը մշակելու համար:

**Հետազոտության փուլերը:** Հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով.

1-ին փուլում (2004-2006թթ.) կատարվել է մտածողության, մտածողության ոճերի, մտածողության տիպերի տեսական նյութերի ծանոթացում՝ մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության տեսանկյունից, մեթոդական գրականության տեսական վերլուծություն, հետազոտության մեթոդաբանության, հետազոտության առարկայի խնդիրների մեթոդների որոշում:

2-րդ փուլում (2006-2009թթ.) կատարվել են հոգեբանական գիտափորձեր: Այս փուլում ընթացող փորձարարական աշխատանքներում ներառվել են նախնական ուսումնասիրություններ՝ ուղղված մտածողության ոճերին, տեսակներին, տիպերին և մեթոդներին: Մտածողության ոճերի մշակումը հոգեբանական համալիր ներգործությունների լայն կիրառմամբ մեծ չափով ապահովել է հիմնախնդրի լուծման արդյունավետությունը:

3-րդ փուլում (2009-2011թթ.) կատարվել է ամբողջացնող և ամփոփիչ աշխատանք. մշակվել, կանոնակարգվել, ստուգվել, համեմատվել, վերլուծվել, իմաստավորվել և ընդհանրացվել են հոգեբանական գիտափորձերի արդյունքները, շարադրվել է ատենախոսությունը, ձևակերպվել են եզրակացություններ ու հանձնարարականներ, մշակվել են ուղիներ՝ դրանց գործնական ներդրման համար:

**Արդյունքների հավաստիությունը:** Հետազոտությունների արդյունքների հավաստիությունը պայմանավորված է գիտատեսական և գործնական հիմքերի վրա կառուցված մեթոդաբանական դիրքորոշումներով, այնպիսի հետազոտական մեթոդների կիրառմամբ, որոնք համապատասխանում են առաջադիր նպատակին և խնդիրներին: Ստացված տվյալների հուսալիությունը պայմանավորված է վիճակագրական մեթոդների, Microsoft Excel, Statistica 6,0, SPSS, ինչպես նաև ուսումնասիրված կամ բացահայտված օրինաչափությունների բովանդակային վերլուծությամբ: Արդյունքների հավաստիությունն ապահովվում են հոգեբանական հետազոտությանը ներկայացված գիտական համալիր պահանջներով, ընտրված մեթոդաբանական սկզբունքներով, հետազոտվողների անհրաժեշտ թվաքանակի ընտրությամբ, կիրառված մեթոդների և մեթոդիկաների հուսալիությամբ, օգտագործված տեսական դրույթներով, ուսուցողական ծրագրերով, ընթացիկ և վերջնական արդյունքների քանակական մշակման վիճակագրական մեթոդներով, ինչպես նաև փորձարարական արդյունքների որակական և քանակական համալիր վերլուծությամբ:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և ներդրումը:** Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների հիմնական դրույթները քննարկվել են Իվանովոյում կազմակերպված միջազգային գիտագործնական գիտաժողովում (Психологические и педагогические аспекты формирования профессиональной и социальной компетентности, Материалы Международной

научно-практической конференции Иваново, 13-14 ноября 2009г.), Գորիսի պետական համալսարանի միջազգային գիտաժողովում (10-14 դեկտեմբերի 2009թ.), Գորիսի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի համատեղ կազմակերպված գիտագործնական գիտաժողովում (6-7 նոյեմբերի 2010թ.), Կիևում կազմակերպված XI միջազգային գիտահոգեբանական գիտաժողովում (XI Міжнародної наукової Психологічної конференції Психологічні проблеми творчості», 25-26 липня 2011 року, Київ), Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Տարիքային և մանկավարժական հոգեբանության» ամբիոնի նիստում (5 փետրվարի 2013թ.), Գորիսի պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (13 փետրվարի 2013թ.), Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում կազմակերպված «Անընդհատ (շարունակական) պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում» թեմայով միջազգային գիտաժողովում ( 01-05 հուլիսի 2013թ):

**Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:**

1. Մտածողության ոճերի ինքնատիպ դրսևորումները կապված են իմացական խնդիրների այլընտրանքային վերլուծությանն անհրաժեշտ տեղեկատվական հենքի կառուցման պատկերացումների հետ:

2. Տվյալ անձի մտածողության տարբեր ոճերի համեմատությունը և դրանց առանձնահատկությունների դիտարկումները հիմք են տալիս առանձնացնելու մտածողության տվյալ ոճում առկա գերակա գործողությունը:

3. Հավաստող գիտափորձի շրջանակում նույնատիպ իմացական խնդիրների լուծման գործընթացով հնարավոր է լիովին բացահայտել հումանիտար և բնագիտական մասնագիտություններ ընտրած ուսանողների մտածողության ոճերի կայուն դրսևորումները:

4. Մտածողության ոճերի բազմագործառնական կիրառմանն ուղղված ուսուցողական ծրագրերը նպաստում են իմացական խնդիրների լուծման ուղիների որոնման գործընթացներին, իսկ դրանց ներդրմամբ բարձրանում է ուսումնական տեղեկույթի մշակման արդյունավետությունը:

5. Ստուգողական գիտափորձի արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ մտածողության տարբեր ոճերի դինամիկ համակարգի կիրառումը դրական ազդեցություն է ունենում խնդրի կամ առաջադրանքի արդյունավետ լուծման գործընթացի բոլոր փուլերի վրա (սկսած առաջադրանքի խոսքայնացումից, ընկալումից մինչև նշանային համակարգերի կերպարանափոխում):

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 210 էջի վրա, պարունակում է 27 աղյուսակ, 21 նկար և 10 գծապատկեր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Ատենախոսության ներածական մասում* հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի գիտական նորույթը, գործնական նշանակությունը և պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ ***«Մտածողության ոճերի ընդհանուր բնութագիրը, ինտելեկտի և ստեղծարարության դրսևորման ինքնատիպությունը իմացական գործունեության մեջ»*** գլխում գիտական և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ներկայացվել են մտածողության ոճերի ընդհանուր բնութագիրը և դրանց դրսևորման առանձնահատկություններն ուսումնաիմացական գործունեության մեջ, որի ուսումնասիրությունից պարզվել է, որ ուսումնաիմացական գործունեության մեջ մտածողության ոճերն առավելապես դրսևորվում են իմացության կամ ճանաչողության նյութի, նրա բնութագրիչ հատկությունների բացահայտման գործընթացներում, որոնք վերբալ մակարդակում հանդես են գալիս որպես հարցադրումներ, դրանց վերաձևակերպումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բացահայտել մտքի ուղղությունը, շարժումը, որն ավելի է խորացնում և կոնկրետացնում հետազոտվող առարկան: Սակայն գոյություն ունեցող փորձարարական հետազոտությունները չեն բացահայտում միաժամանակ տարբեր ոճեր, չեն ընդլայնում առաջադրանքի կամ խնդրի բնույթը, տիպերը, որոնցից կախված են մտածողության ոճերի դրսևորումները:

Նույն գլխում ներկայացվել են մտածողության տարաբնույթ ոճերի վերլուծություններ, որից կարելի է այն եզրակացության հանգել, որ մտածողության ոճերի ընտրության և դրանցով ղեկավարվելու հարցը մշտապես կապվում է կոնկրետ խնդիրների լուծման հետ, քանի որ իրականության մեջ հնարավոր չէ նշել իմացության գոնե մեկ բնագավառ, որում ուղղակիորեն չներթափանցի ու իր մասնակցությունը չունենա անձի մտածողության ոճը: Մտածողության գործընթացում մարդու մեջ նախկինում կուտակված գիտելիքներն ու կարողությունները, մտավոր գործողությունները նոր տեղեկույթի հոգեբանական մշակման համար համակցելու, համադրելու, կոնկրետացնելու, դասակարգելու անհրաժեշտություն են զգում: Ժամանակակից հոգեբանության խնդիրներից մեկն է՝ մտածողության տարաբնույթ ոճերի վերլուծությամբ և դրանց կիրառմամբ նպաստել ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ ողջ հասարակության հոգևոր և ինտելեկտուալ զարգացմանը՝ հեշտացնելով մարդկանց ըմբռնումը:

Դիտարկվել են մտածողության ոճերի համատեղելիության և համադրելիության առանձնահատկությունները և պարզվել է, որ մտածողության տարբեր ոճերի համատեղելիության խնդիրը կարելի է բաժանել երկու մասի՝ ա. միևնույն անձի կողմից մտածողության երկու ոճերի համադրում, բ. երկու անձերի

համատեղ գործունեության մեջ մտածողության երկու ոճերի համադրում: Սակայն մարդկային գործունեության արդյունավետությունը չի բնորոշվում միայն միմյանց հասկանալու իրողությամբ: Յասկանալու գաղափարը մտածողության ոճի պարագայում կարող է վերաբերել նպատակին, գործողության կատարման եղանակին, տեղեկույթի պահպանմանը, անձնային հետաքրքրություններին և այլն: Գործողության օբյեկտիվ տեսանկյունով նմանություններ կարելի է փնտրել անալիտիկ, ռեալիստ և պրագմատիկ մտածողության ոճերի միջև, քանի որ դրանք խոսում են փաստերի, փաստարկումների, ստուգված տեղեկույթների լեզվով: Քննարկվել է նաև ձևափոխող մտածողության գաղափարը, երբ անձն իրեն ստիպում է այլ կերպ նայել պրոբլեմին՝ դուրս գալով սովորական դարձած տրամաբանության շրջանակից:

Քննարկվել են մտածողության ոճերի և անձնային գծերի հնարավոր կապերի հարցը: Վերլուծությունից պարզվել է, որ մտածողության ոճը դիտարկվում է որպես անձի կայուն հատկություններ, երբ կոնկրետ դեպքում տեղեկատվության որոնման ու կուտակման գործընթացում համադրվում են տարբեր անձնային գծեր: Գ. Օլպորտն անձնային գծերին տալով «Դիսպոզիցիա» անվանումը՝ անձնավորությանը համարում է անհատի ներքին այն հոգեֆիզիկական համակարգի դինամիկ կազմակերպվածությունը, որով բնորոշվում է նրա մտածողությունը և վարքը: Յետևաբար, իմացական խնդիրների լուծմանն ուղղված մարդու կայուն վարքը կախված է տվյալ անձի մտածողության տիպից և մտածողության գերակա ոճից: Կարևոր է նաև հաշվի առնել, թե տվյալ տեսության շրջանակներում ինչպես է սահմանվում «անձ» հասկացությունը: Օրինակ՝ Ռ. Քեթթելի ուսումնասիրություններում  անձին տրվում է ընդհանուր սահմանում. «Անձն այն է, ով թույլ է տալիս կանխատեսել, թե ինչ կարող է անել մարդը տվյալ իրավիճակում»: Սա նշանակում է, որ մարդու ներհոգեկան գործընթացները, որոնց թվում նաև մտածողությունը, գիտակցաբար կապվել է մարդու վարքի հետ: Ըստ էության մտածողության ոճը ևս անձնային առանձնահատկություն է: Ընդգծելով այն գաղափարը, որ մտածողության միջոցով մարդուն հնարավորություն է ընձեռնվում լուծել ոչ միայն ինքնաճանաչողության, ինքնազարգացման և ինքնաիրացման խնդիրները, այլև մարդկանց անհատականությունը բնորոշել անձնային տարբեր գծերի համադրման միջոցով, մարդկանց համեմատել միմյանց հետ առանձին անձնային գծերով:

Տեսական մասում ներկայացվել են ինտելեկտի և մտածողության տարբեր ոճերի  կապերի դրսևորումները, որից պարզվել է, որ չնայած ինտելեկտի մեկնաբանման մեջ գոյություն ունեն տարաբնույթ պատկերացումներ, այսուհանդերձ ինտելեկտի և մտածողության ուսումնասիրման կապն առկա է և ֆունկցիոնալ իմաստով նպատակահարմար է ինտելեկտի մասին ունեցած ընդհանուր պատկերացումները դիտարկել մտածողության կոնկրետ ոճերի դրսևորման գործընթացներում: Ինտելեկտը հենվում է մարդու տեղեկատվական դաշտի վրա և մտածողության ոչից ելնելով՝ որոշում մարդու մտքի «շարժումը»: Նկատի ունենալով մտածողության վերլուծական ոճի ուղղվածությունը՝ կոգնիտիվ ոճի առանձնահատկություններն այս ենթագլխում ներկայացվել են պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով, որի ուսումնասիրումը կարող է բնորոշել անձի մտածողության ոճի դրսևորման իրական պատկերը, քանի որ որևէ երևույթի առաջացման հիմնական պատճառը

երբեմն ակնհայտ չէ: Սակայն միշտ չէ, որ տվյալ խնդիրը պետք է լուծելի համարել, քանի որ շատ հաճախ գործնական կյանքում մարդը կարող է բավարարվել միայն տվյալ հարցը կամ խնդիրը ընկալելուց: Այս իմաստով պառճառահետևանքային ինտելեկտը համադրելի է ձևական- տրամաբանական մտածողության հետ: Կարելի է ասել, որ կոգնիտիվ ոճերն ինքնատիպ են և ոչ միայն կանոնակարգում են մտածողության ուղղվածությունը, այլև ցույց են տալիս առարկայի, երևույթի, պատկերացումների, դրանց մասերի և ամբողջականորեն դրանց կառուցվածքների զարգացման միտումներ:

Այս գլխում ներկայացվել են նաև անձի ստեղծարար հատկությունների և մտածողության ոճերի կապերին վերաբերող հարցերը և պարզվել, որ չնայած Ջ. Գիլֆորդը խոսում է ստեղծարարության պարամետրերի մասին, բայց դրանցից յուրաքանչյուրը ենթադրում է մտածողության մեկ, երբեմն նաև երկու և ավելի մտածողության ոճերի համակցում: Մարդու ինտելեկտուալ բազան սեփական ստեղծագործության զարգացման հիմքն է: Սակայն, թե ինչպե՞ս վարվել այդ ինտելեկտուալ հենքի հետ կոնկրետ խնդիրներ լուծելիս՝ որոշում է նրա դրսևորած մտածողության ոճի առանձնահատկությունները: Թերևս դրանով է պայմանավորված մտածողության ստեղծարարությունը կամ անձի լեզվով ասած անձնային ստեղծարարությունը, որն ի դեպ չի կարող կտրվել սոցիումի պահանջներից, քանի որ ի վերջո սոցիումն է գնահատում տվյալ մարդու ստեղծարարությունը, նրա կատարածի արժեքը: Հնարավոր է նույնիսկ, որ այդ ստեղծարարությունը չգնահատվի տվյալ ժամանակաշրջանում և երկար ժամանակ պահանջվի տվյալ գյուտը, հայտնագործությունը հայտնաբերելու համար: Այսպիսով, նույնիսկ թույլ արտահայտված ստեղծագործական կարողություններն ուղղորդում են մարդու կենսագործունեությունը, հատկապես ուսումնաիմացական խնդիրներ լուծելիս և ազդում տարաբնույթ իմացական գործընթացների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Հավաստող գիտափորձերի նպատակը, մեթոդիկան և հիմնական արդյունքները»*** գլխում ներկայացված են հավաստող գիտափորձի նպատակը և անցկացման ընդհանուր բնութագիրը: Այս գլխի նպատակն է՝ ուսումնասիրել հումանիտար և բնագիտական մասնագիտություններով սովորող ապագա մանկավարժների մտածողության ոճերը՝ տարաբնույթ իմացական խնդիրներ լուծելիս: Հավաստող գիտափորձում օգտագործվել են իմացական խնդիրներ, որոնց լուծումները կարող են ընթանալ այլընտրանքային տարբերակներով, սակայն բոլոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր դրսևորել կոնկրետ մոտեցում, որով էլ պայմանավորված էր լուծման ուղին որոշելու կարողությունը: Այս գիտափորձում օգտագործվել են ինչպես վերբալ, այնպես էլ պատկերային առաջադրանքներ:

Եթե այժմ փորձենք իրար հետ համեմատել ուսումնասիրվող կուրսերի վերբալ առաջադրանքին վերաբերվող միջին ցուցանիշները, ապա կհամոզվենք, որ դրանք բավականաչափ մոտ են միմյանց:

*Աղյուսակ 1*

*Վերբալ առաջադրանքին վերաբերող միջին ցուցանիշներ*

| Գիտափորձին մասնակցած ֆակուլտետներ | 1-4-րդ կուրսերի ուսանողների թվաքանակ | Միջին գնահատականներ |
|---|---|---|
| Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա | 16 | 22 |
| Հայոց լեզու և գրականություն | 16 | 21,75 |
| Պատմություն | 16 | 22 |
| Մաթեմատիկա | 16 | 22 |

Այսպիսով, պարզվեց, որ չնայած կան որոշակի տարբերություններ տարբեր մասնագիտության կուրսերի միջին ցուցանիշների միջև, սակայն ընդհանուր արդյունքում, ուսումնառության 4 տարիների կտրվածքով, վերլուծահամադրական ոճի նշված ցուցանիշը մոտավորապես նույնն է բոլոր ֆակուլտետներում:

Գիտափորձում առաջադրել ենք նաև պատկերներից կազմված թեստ՝ Ռավենի մատրիցայի E սերիան, որը հաճախ է օգտագործվում հոգեբանության դասավանդման գործընթացում: Թեստի հիմքում ընկած է օրինաչափություն փնտրելու ընդունակությունը: Պատկերները թեստում ներկայացված են որոշակի օրինաչափությամբ, ունեն նման և տարբերիչ հատկանիշներ: Այս թեստը կիրառելիս նպատակ ենք ունեցել ուսումնասիրել ուսանողների մտածողության ոճը 2 տեսանկյունից.

ա) ինչպե՞ս է փորձարկվողը միմյանց հետ համադրում պատկերները, ավելի շատ ուշադրություն է դարձնում նմա՞ն հատկանիշներին, թե՞ պատկերների տարբերություններին,

բ) ինչպե՞ս է փորձարկվողը բացահայտում պատկերների օրինաչափ կապերը:

Ստորև ներկայացնենք պատկերային թեստի՝ Ռավենի մատրիցայի կատարման ընթացքում արձանագրված ցուցանիշները:

*Աղյուսակ 2*

*Պատկերային առաջադրանքին վերաբերող միջին ցուցանիշներ*

| Գիտափորձին մասնակցած ֆակուլտետներ | 1-4-րդ կուրսերի ուսանողների թվաքանակ | Միջին գնահատական |
|---|---|---|
| Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա | 16 | 26,75 |
| Հայոց լեզու և գրականություն | 16 | 21,25 |
| Պատմություն | 16 | 18 |

| | | |
|---|---|---|
| Մաթեմատիկա | 16 | 23,5 |

Աղյուսակ 2-ի արդյունքներից ելնելով կրկին համոզվում ենք, որ առարկայական գործողություններն առաջնահերթ են և փորձում ենք հասկանալ, թե ինչու «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնում պետք է բարձր լինեն միջին արդյունքները (26,75): Մտածողության ոճի խնդիրը կապում ենք ինչպես տվյալ մասնագիտության առանձնահատկությունների, այնպես էլ տվյալ ուսանողի անհատական ոճի հետ:

Այսպիսով, վերբալ և պատկերային թեստերի կիրառումը հնարավորություն է տալիս պատասխանել մի հարցի. արդյո՞ք տվյալ փորձարկվողը վերակառուցում է իր մտածողության ոճը առաջադրանքին համապատասխան, թե՞ այդ ոճը հաստատուն է մնում իմացական խնդիրներ լուծելիս: Չնայած մտածողության ոճը կարծես թե զուտ անհատական դրսևորում է, այդուհանդերձ միևնույն մասնագիտության շրջանակում նկատվում է մտածողության ոճի նույնատիպ դրսևորում: Մտածողության ոճն ուղղակիորեն կախված է ոչ այնքան մասնագիտությունից, որքան տեսական կամ գործնական բնույթի դասավանդվող առարկաներից, որոնք կարծես թե ուղղորդում են ուսանողի միտքը՝ նախապատվությունը տալով տվյալ փուլում այս կամ այն ոճի օգտագործմանը:

Մեզ հետաքրքրել է նաև, թե մտածողության ոճերն ինչպես են բաշխվում նույն մասնագիտության 1-4-րդ կուրսերում՝ մեկ ընդհանրական ցուցանիշի տեսքով (երկու առաջադրանքների կտրվածքով)՝

*Աղյուսակ 3*

*Միջին գնահատականների և ցուցանիշների ամփոփում*

| Գիտափորձին մասնակցած ֆակուլտետներ | 1-4 կուրսերի ուսանող-ների թվաքանակ | Միջին գնահատական | Միջին ցուցանիշ |
|---|---|---|---|
| Տարրական կրթության մանկ. և մեթոդիկա | 16 | (27+24+23+23,5):4=24,37 | բարձր |
| Հայոց լեզու և գրականություն | 16 | (27,5+20+19,5+19):4=21,5 | միջին |
| Պատմություն | 16 | (24+16+23+17):4=20 | ցածր |
| Մաթեմատիկա | 16 | (15+28+23,5+24,5):4=22,75 | միջին |

Աղյուսակից պարզ երևում է, որ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժինը 1-4-րդ կուրսերի կտրվածքով վերբալ և պատկերային թեստերի լուծման արդյունքում ավելի բարձր ցուցանիշների է հասել: Ըստ երևույթին, դա կարելի է բացատրել այն իրողությամբ, որ այդ բաժնում

դասավանդվում են միևնույն տարիքին ուղղված ավելի մեծ թվով առարկաներ, որոնք իրենց մեջ ընդգրկում են որոշակի ներուժ՝ միջին մտավոր կարողություններ ունեցող թեստային առաջադրանքներ կատարելու համար: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի ուսանողների մտածողության ոճերն առաջադրանքներից կախված ունեն անցման ավելի շատ հնարավորություն:

Հավաստող գիտափորձում կիրառել ենք նաև Ռ. Քեթթելի բազմագործոն մեթոդիկան՝ մտածողության ոճերն ուսումնասիրելիս. մի կողմից այդ գործոնների ազդեցությունը մտածողության ոճի վրա պարզելու նպատակով, մյուս կողմից՝ տեսական վերլուծության մեջ առանձին գործոնների փոխպայմանավորվածությամբ բացահայտվող մտածողության ոճերի մասին պատկերացում կազմելու համար: Մտածողության ոճերի և անձնային գործոնների փոխադարձ կապը ենթակա է հատուկ ուսումնասիրման, քանի որ բոլոր գործոններն էլ այս կամ այն չափով հանդես են գալիս մարդու որոնողական և ստեղծագործական գործունեության մեջ՝ նկատի ունենալով, որ մտածողության ոճի դրսևորումն էլ ունի անձնային երանգավորում և ուղղակիորեն կապվում է բոլոր գործոնների հետ, չնայած դրանք անձի ուսումնասիրման մեջ ունենում են տարբեր գործառույթներ:

Ռ. Քեթթելի 16 անձնային գործոնները համեմատել ենք 3 գործոնային խմբերով՝

ա) ինտելեկտուալ առանձնահատկություններ (B, M, $Q_1$),

բ) հուզակամային առանձնահատկություններ (C, G, I, O, $Q_3$,$Q_4$),

գ) միջանձնային փոխազդեցությունների հաղորդակցական հատկություններ և առանձնահատկություններ (A, H, F, E, $Q_2$, N, L):

Արդյունքների հաշվարկումը ցույց է տալիս, որ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի մտածողության համեմատաբար բարձր ոճին (24,37) համապատասխանում է ինտելեկտուալ առանձնահատկությունների (B, M, $Q_1$) փոքր-ինչ ցածր ցուցանիշ (6,18), իսկ «Պատմություն» մասնագիտության մտածողության ցածր ոճին (20) համապատասխանում է համեմատաբար բարձր ցուցանիշ (6,74): Հուզակամային առանձնահատկությունների (C, G, I, O, $Q_3$,$Q_4$) հետ կատարված հաշվարկներից երևում է, որ մտածողության բարձր ոճ (24, 37) ունեցող «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնին համապատասխանում է հուզակամային բարձր ցուցանիշ (7,4), իսկ «Պատմություն» բաժնի մտածողության ցածր ոճին (20) համապատասխանում է համեմատաբար ցածր ցուցանիշ (7,14): Միջանձնային փոխազդեցությունների հաղորդակցական հատկությունները և առանձնահատկությունները (A, H, F, E, $Q_2$, N, L) մտածողության բարձր ոճ (24,37) ունեցող «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնում փոքր-ինչ բարձր են (6,29), քան «Պատմություն» բաժնում, որտեղ մտածողության ցածր ոճին (20) համապատասխանում է փոքր-ինչ ցածր ցուցանիշ (6,2):

Համեմատել ենք նաև «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» և «Պատմություն» մասնագիտությունների «Ինքնագնահատական (MD)» անձնային գործոնի միջինացված տվյալները: Պարզվել է, որ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի մտածողության

համեմատաբար բարձր ոճին (24,37) համապատասխանել ինքնագնահատականի բարձր արդյունք (7,81), իսկ «Պատմություն» մասնագիտության մտածողության համեմատաբար ցածր ոճին (20) համապատասխանել է ինքնագնահատականի ավելի ցածր արդյունք (6,93):

Վերը նշված վերլուծությունները ցույց են տալիս իմացական խնդիրների միջոցով բացահայտված մտածողության ոճերի և Ռ. Քեթթելի անձնային գործոնային խմբերի միջև եղած հնարավոր կապերը:

Հավաստող գիտափորձի արդյունքներից պարզվեց, որ

• չնայած կան որոշակի տարբերություններ տարբեր մասնագիտության կուրսերի միջին ցուցանիշների միջև, սակայն ընդհանուր արդյունքում, ուսումնառության 4 տարիների կտրվածքով, վերլուծահամադրական ոճի նշված ցուցանիշը մոտավորապես նույնն է բոլոր ֆակուլտետներում,

• չնայած մտածողության ոճը կարծես զուտ անհատական դրսևորում է, այդուհանդերձ միևնույն մասնագիտության շրջանակում նկատվում է մտածողության ոճի նույնատիպ դրսևորում: Մտածողության ոճն ուղղակիորեն կախված է ոչ այնքան մասնագիտությունից, որքան տեսական կամ գործնական բնույթի դասավանդվող առարկաներից, որոնք կարծես թե ուղղորդում են ուսանողի միտքը՝ նախապատվությունը տալով տվյալ փուլում այս կամ այն ոճի օգտագործմանը,

• մտածողության ոճի ընտրությունը տարբեր ֆակուլտետների ուսանողների կողմից պայմանավորված է ոչ միայն բուն առարկայական, այլև ուսանողի անձնային և անհատական առանձնահատկություններով:

Հումանիտար և բնագիտական մասնագիտություններ ընտրած ուսանողների մեջ խնդիրների այն դասը, որը վերաբերվում է առարկայական (պրակտիկ) գործողություններին, ավելի լավ են արտահայտվում համադրական գործողությունները (սինթեզները): Սակայն, թեստերի շրջանակում դժվար է ընթանում մտածողության ոճի փոփոխությունը հատկապես այն դեպքում, երբ խնդրում առկա են այլընտրանքային դրսևորումներ: Պարզվել է նաև, որ այն մասնագիտությունները, որոնց տեսական առարկայացանկը և գործնական դասաժամերը բովանդակային առումով անչափ մոտ են միմյանց, ավելի ցայտուն են երևում մտածողության նույնատիպ ոճի դրսևորումները:

Ատենախոսության երրորդ՝ ***«Ուսուցողական գիտափորձերի մեթոդիկան, ընթացքը և հիմնական արդյունքները»*** գլխի նպատակն է՝ հավաստող գիտափորձերի ընթացքում բացահայտված հոգեբանական դժվարությունների, ստացած արդյունքների, նկատված բացթողումների և թերությունների հիման վրա մշակել և ներդնել իմացական գործունեությանը, մտածողության հայեցակարգին, մտածողության տիպերի տարանջատմանը, անձի բազմագործոն ուսումնասիրմանը, սկզբունքներին ու տեսական պատկերացումներին համապատասխան այնպիսի ուսուցողական ծրագրեր, որոնք ուսանողներին հնարավորություն կտան իրենց մեջ նպատակամետ ձևավորելու և զարգացնելու գործողությունների այնպիսի համակարգ, որոնք իրենց բովանդակությամբ ու գործառութային նշանակությամբ որոշակիորեն նպաստեն մտածողության ոճերի դինամիկ դրսևորմանը, առավելապես համապատասխանեցնելով առաջադրված հետազոտական խնդրին:

Ուսուցողական գիտափորձի խնդիրներն են՝

ա) Կազմել ուսուցողական ծրագիր, որը հնարավորություն տա անհատական և խմբային պարապմունքների միջոցով ուսանողներին ծանոթացնել մտածողության, մտածողության տիպերի, անձի հիմնական կառուցվածքային բաղադրիչների և մտածողության ոճերի հետ:

բ) Զարգացնել որոշ ստեղծարար կարողություններ, որոնք անհրաժեշտ են համապատասխան նյութերի ընտրության, տեղեկությունների կուտակման և մշակման համար:

Ուսուցողական գիտափորձի ընթացքում ներառել ենք ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար մասնագիտություններին վերաբերող ուսումնական տեքստեր, քանի որ դրանք էապես տարբերվում են միմյանցից իրենց բովանդակությամբ, գործողությունների համակազմով, տվյալների ներկայացվածությամբ, նյութի մշակման առանձնահատկություններով:

Ուսուցողական գիտափորձի մեթոդիկան հետևյալն է՝

1. Ուսուցողական ծրագրերի ձևավորում, որի մեջ մտնում են՝

- մտածողության գործընթացների տարանջատումը գործողությունների համակարգում,
- բառատրամաբանական մտածողության զարգացման համակարգ,
- մտածողության տիպերի բացահայտում և դրանց կիրառումը իմացական խնդիրներ լուծելիս կամ առաջադրանքներ կատարելիս,
- ստեղծարարությանն ուղղված գործողությունների համակազմ:

2. Մտածողության համակցական ոճի ձևավորում:

Ուսուցողական գիտափորձի անցկացումից հետո կատարվել են հետևյալ եզրակացությունները. տեղեկանյութի հավաքագրման, կուտակման և մշակման ընթացքում՝ կախված խնդրի, առաջադրանքի, տեքստի բնույթից, նպատակահարմար է օգտագործել համակցական ոճը: Այդ ոճի ուսուցումն առաջնահերթ խնդիր է մտածողության ոճերի բազմազանության մասին պատկերացում կազմելու համար: Ուստի անհրաժեշտ են ուսուցողական ծրագրերը և ուսուցողական գիտափորձի անցկացումը, քանի որ համակցական ոճի ինքնաբուխ ձևավորումը կարող է երկար տարիներ տևել և այն էլ որոշակի թերություններով:

Ատենախոսության չորրորդ՝ ***«Ստուգողական գիտափորձերի մեթոդիկան, ընթացքը և հիմնական արդյունքները»*** գլխի նպատակն է՝ պարզել, թե ուսուցողական գիտափորձերի ընթացքում ձեռք բերած մտածական գործընթացներին բնորոշ գործողությունների համակազմն իր ընդհանրացվածությամբ և համակարգվածությամբ արդյոք կիրառելի՞ է իմացական բնույթի այլ խնդիրներ լուծելու գործընթացում և ինչպիսի՞ փոփոխություններ են արձանագրվում մտածողության ոճերի դինամիկ համակարգում: Այսինքն՝ ուսուցողական ծրագրերը յուրացնելուց հետո, անհրաժեշտ տեղեկատվության կուտակման և կիրառման գործընթացում, փորձարկվողներն ի վիճակի՞ են իրենց մտածողության ոճը համապատասխանեցնելու առաջադրած խնդրի լուծմանը:

Ստուգողական գիտափորձի խնդիրներն են՝

- կազմել չափանիշների այնպիսի ամբողջական համակարգ, որի միջոցով գնահատենք փորձարկվողների մտածողության ոճերը՝ տարբեր տիպի իմացական խնդիրներ լուծելիս,

- պարզել, թե ինչպե՞ս է փոխվում մտածողության ոճն անհատական և խմբային գիտափորձերի ընթացքում, երբ օգտագործվում են նշանասիմվոլային տարբեր արտահայտչամիջոցներով ներկայացված ուսումնական նյութեր կամ խնդիրներ:

Ստուգողական գիտափորձի մեթոդիկան հետևյալն է.

- Ստուգողական գիտափորձում` որպես փորձարարական նյութ կամ առաջադրանք, առանձնացրել ենք մի քանի տիպի խնդիրներ (վերբալ, վիզուալ կամ նշանասիմվոլային խառը արտահայտչամիջոցներով), որոնք չեն կիրառվել հավաստող և ուսուցողական գիտափորձերում,
- Ռ. Ամտխաուերի կողմից առաջարկված տարբեր բնույթի խնդիրներ և առաջադրանքներ, որում ընդգրկված են հետևյալ սուբթեստերը` ա) նախադասությունների շարունակում, բ) բառի բացառում, գ) համանմանություն, դ) ընդհանրացում, ե) թվաբանական առաջադրանքներ, զ) թվային շարքեր, է) տարածական երևակայություն, թ) տարածական ընդհանարացում, ժ) հիշողություն, մնեմիկական ընդունակություններ:

Ստուգողական գիտափորձի արդյունքները ցույց են տալիս, որ մտածողության տարբեր ոճերի դինամիկ համակարգի կիրառումը դրական ազդեցություն է ունենում իմացական խնդրի կամ առաջադրանքի արդյունավետ լուծման գործընթացի բոլոր փուլերի վրա (սկսած առաջադրանքի խոսքայնացումից, ընկալումից մինչև նշանային համակարգերի կերպարանափոխում): Բացի դրանից, պարզվում է, որ ուսուցողական ծրագրերի ներդրման միջոցով ուսանողների ձեռք բերած կարողություններն ընդհանուր են, առավել համակարգված և կիրառելի` ուսումնաիմացական խնդիրների բազմատարբերակային լուծման գործընթացում:

Տեսական վերլուծությունից և փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփումից կարելի է հանգել **հետևյալ եզրակացություններին.**

1. Հաճախ կիրառվող մտածողության ոճերի (վերլուծական, համադրական և այլն) տարբեր բնորոշումներն իրենց ընդհանրական ձևակերպումներով չեն խորացնում ոճերի վերաբերյալ առկա պատկերացումները տարաբնույթ ուսումնաիմացական խնդիրներ լուծելիս, քանի որ վերջիններս տարբեր փուլերում պահանջում են գործողությունների որակական առումով տարբեր արտահայտչամիջոցներով ներկայացված նոր համակազմ:

Մտածողության ոճը բարդ դինամիկ համակարգ է, որը ներառում է տվյալ անձի մտածողության ինքնատիպությունը: Որպես ինտեգրատիվ որակ այն ներառում է մտածողության տիպը և անձնային-անհատական առանձնահատկությունները, որոնք հատկապես հանդես են գալիս տեղեկույթի որոնման, մշակման և հաղորդման որևէ արտահայտչաձևում:

Մտածողության ոճը պայմանավորված է ոչ միայն մարդու մտավոր ներուժով, այլև գիտելիքների առկա պաշարի ադեկվատ կիրառմամբ, համապատասխան իրավիճակներում կողմնորոշվելու ընդհանուր կարողություններով, որոնք անկախ ուսումնական նյութի կամ ուսումնաիմացական խնդրի առանձնահատկություններից, միտված են գերակա գործողությունների համակազմի որոնմանը, որը, բնականաբար, պետք է հաշվի

առնվի բարձրագույն կրթության համակարգում՝ ուսանողների հետ տարվող ինքնուրույն աշխատանքների կազմակերպման գործընթացում:

2. Մտածողության ոճը դինամիկ է, քանի որ իմացական խնդիրներ լուծելու տարբեր փուլերում ենթարկվում է որոշակի փոփոխությունների, այսինքն՝ իմացական խնդրի բնույթին և խնդրի լուծման տվյալ փուլի կոնկրետ պահանջին համապատասխան կարող է փոխվել մտածողության ոճը:

Փորձարարական տվյալների վիճակագրական մշակումները ցույց են տալիս, որ անկախ մասնագիտության ընտրությունից մտածողության ոճերի փոփոխությունները (որևէ գերակա գործողությունից անցում մեկ այլ գործողության) որոշակիորեն ազդում են իմացական խնդրի լուծման արդյունավետության վրա: Պիրսոնի համահարաբերակցության գործակիցը $r_{xy} = 0{,}55$ ցույց է տալիս, որ արդյունքը նշանակալի է, որով հաստատվում է ուսուցողական ծրագրերի նպատակահարմարությունը մտածողության ոճերի արդյունավետ ձևավորման գործընթացում:

Մտածողության ոճը լոկալ (տեղային) իմաստով՝ իբրև ոճի կոնկրետ դրսևորում, բնութագրվում է ոչ միայն ուսումնաիմացական տեղեկույթի օգտագործման և տվյալ դասին վերաբերող խնդիրների լուծման եղանակների ընտրությամբ, այլև հանդես է գալիս որպես ուսումնասիրվող հարցի առաջադրման, քննարկման կամ լուծման ընդհանուր իմացական կողմնորոշման հիմք, որը կարելի է պայմանականորեն անվանել՝ «Անձի կոգնիտիվ պատկերացումների ռազմավարություն»:

Կախված իմացական խնդրի բնույթից՝ ուսանողների զգալի մասը չի դրսևորում մտածողության համապատասխան ոճ, որի արդյունքում ոչ միայն դժվարանում է խնդրի լուծման գործընթացը, այլև ավելորդ հուզական լարվածություն է առաջանում նրանց մեջ, որն էլ բացասաբար է անդրադառնում խնդիրների լուծման հետագա քայլերի մշակման գործընթացների վրա:

Այն դեպքում, երբ խնդրում առկա են այլընտրանքային լուծման հնարավորությունները, դժվար է ընթանում մտածողության ոճի փոփոխությունները՝ հատկապես թեստերի կամ իմացական խնդիրների լուծման պարագայում: Ուսումնասիրված ակադեմիական խմբերի մտածողության ոճերի միջինացված տվյալները ցույց են տալիս, որ կան էական տարբերություններ՝ ընտրած մասնագիտության առանձնահատկություններից կախված: Դասավանդվող տեսական և գործնական առարկաների հարաբերակցությունը որոշակիորեն ազդում է մտածողության ոճերի կոնկրետ դրսևորումների վրա: Այսուհանդերձ, մտածողության ոճերի դրսևորումներն ուղղակիորեն կախված են ձեռք բերած գիտելիքների կիրառման հիմնական եղանակից, որն ունի նաև անձնային գործոնների երանգավորում և մտածողության գերակա տեսակի ընտրության միտվածություն: Պարզվում է նաև, որ այն մասնագիտությունները, որոնց տեսական առարկայացանկը և գործնական դասաժամերը բովանդակային առումով անչափ մոտ են միմյանց, ավելի ցայտուն են երևում մտածողության նույնատիպ ոճի դրսևորումները մասնագիտական խնդիրներ լուծելիս:

3. Ցածր կուրսերում առկա են իմացական փորձի պակասը, տեսականի և գործնականի համադրման ու նոր ուսումնական տեղեկատվության հետ աշխատելու դժվարությունները, որոնք բացասաբար են անդրադառնում մտածողության ոճերի ընտրության վրա: Քանի որ իմացական խնդրի բնույթից և բովանդակությունից կախված մտածողության ոճերի փոփոխությունները 1-4-րդ կուրսերում ինքնաբերաբար չեն ձևավորվում ուսումնառության ընթացքում

(այսինքն՝ մտածողության ոճերի տեղաշարժեր առանձնապես չեն նկատվում նույնատիպ իմացական խնդիրներ լուծելիս), ուստի անհրաժեշտ է ձևավորել գործողությունների այնպիսի համակազմ և սահմանել այնպիսի հաջորդականություն, որոնք առավելագույնս նպաստեն տեղեկատվության հավաքագրմանը, կուտակմանը, փոխանցմանը՝ նշանասիմվոլային տարբեր արտահայտչամիջոցներով:

4. Տեղեկույթի հավաքագրման, կուտակման և մշակման ընթացքում՝ կախված իմացական խնդրի, առաջադրանքի կամ տեքստի բնույթից, նպատակահարմար է օգտագործել համակցական ոճը, որի ուսուցումն առաջնահերթ խնդիր է մտածողության ոճերի բազմազանության մասին պատկերացում կազմելու համար: Հետևաբար անհրաժեշտ է մշակել ուսուցողական ծրագրեր և կազմակերպել համակցական ոճի նպատակամետ ձևավորմանը միտված ուսուցողական գիտափորձեր, քանի որ համակցական ոճի ինքնաբուխ ձևավորումը կարող է երկար տևել և այն էլ՝ որոշակի թերություններով:

5. Մտածողության ոճի ընտրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե մտածողության ո՞ր տեսակն է գերակայում տվյալ մարդու իմացական գործունեության մեջ: Չնայած ոճը հանդես է գալիս որպես իմացական գործունեության կազմակերպման մոտեցում, այդուհանդերձ խնդրի լուծումն իրականացվում է՝ ըստ մտածողության տիրապետող տեսակի:

Տվյալ առաջադրանքի լուծմանը միտված առարկայական կամ մտավոր թաքնված գործողություններն իրենց որակական բնութագրիչներով (պատկերային, առարկայական, ամբողջական, ընդհանրացված և այլն) կարող են բացահայտվել՝ ի հաշիվ մտածողության ոճերի վերալրացման կամ փոխանցելիության հատկանիշների:

Չնայած վերբալ կամ վիզուալ տեքստերի համադրումը կամ տարաբնույթ ձևափոխությունները կարող են նույնական լինել գործողությունների անվանումների տեսանկյունով, սակայն ունենան տարբեր դրսևորումներ՝ տվյալ գործողության համամասնական լինելու պարագայում: Այն դեպքերում, երբ միաժամանակ կատարվում են մի քանի գործողություններ, գործընթացի արդյունավետությունը շարունակում է կախված մնալ ինչպես մտածողության տեսակից, այնպես էլ մտածողության գերակա ոճից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հրատարակումներում.


1. **Ն. Հախվերդյան, Վ. Կարապետյան**, Մտածողության ոճերի փորձարարական հետազոտության մի քանի արդյունքներ, «Կրթությունը և գիտությունը Արցախում», գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, թիվ 3-4, 2009թ, էջ 71-76:

2. **В. Карапетян, Н. Ахвердян.** Проблема новой методологии исследования мышления в современной психологии, Материалы международной научно-практической конференции Иваново, 13-14 ноября, 2009г., т.1, Иваново - 2009, стр. 230-235.

3. **Ն. Հախվերդյան, Վ. Կարապետյան**, Մտածողության ոճերի փորձարարական հետազոտության մի քանի արդյունքներ, «Կրթությունը և գիտությունը Արցախում», գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, թիվ 1-2, 2010թ, էջ 8-12:

4. **В. Карапетян, Н. Ахвердян**, Особенности формирования комбинаторного стиля мышления. Актуальні проблеми психології: Збірник наукових праць Інституту психології ім. Г.С. Костюка НАПН України.- К: Видавництво <<Фенікс>>, 2011.-Т. XII. Психологія творчості.- Випуск 13.- с.178-186.

5. **Ն. Հախվերդյան**, Անդրադարձ մտածողության ոճերի հիմնախնդրին ժամանակակից հոգեբանության տեսանկյունից, Հոգեբանությունը և կյանքը, Տաթև գիտակրթական համալիր, Զանգակ 97, թիվ 3-4, 2011թ., էջ 121-127:

6. **Ն. Հախվերդյան**, Մտածողության անհատական ոճերի ձևավորման եղանակները մանկավարժական պրակտիկայի կազմակերպման նախնական փուլում, «Անընդհատ (շարունակական) պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում» Միջազգային գիտաժողով, 01-05 հուլիսի, Երևան, 2013թ., էջ 106-115:

АХВЕРДЯН НАЗЕЛИ СЕРЕЖАЕВНА

## ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ СТИЛЕЙ МЫШЛЕНИЯ В ПРОЦЕССЕ МНОГОВАРИАНТНОГО РЕШЕНИЯ ПОЗНАВАТЕЛЬНЫХ ЗАДАЧ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- «Общая психология, теория и история психологии, психология личности»

Защита диссертации состоится 1-го апреля 2014 г. в $12^{00}$ на заседании специализированного Совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

### РЕЗЮМЕ

**Актуальность исследования:** Радикальные изменения общественной жизни выражаются также в системе образования, в различных процессах направленных на формирование будущих специалистов. Концептуальные изменения системы образования сочетаются с новыми ориентирами образовательной деятельности будущих специалистов в условиях формирования и развития различных стилей мышления среди учащихся. В этом контексте модернизация высшего образования направлена на обеспечение качества образования будущих специалистов, в первую очередь на активацию стилей мышления. Разработка, сохранение и дальнейшее воспроизведение учебного или научного материала как в школе, так и в высшем учебном заведении становится приоритетным вопросом, решение которого в основном зависит от особенностей выбора стилей мышления студента.

**Объектам исследования** являются процессы накопления, получения, разработки и представления данных теоретическими и практическими способами.

**Предмет исследования** – процессы особенного проявления стилей мышления, обусловленные с выбором средств многовариантного решения учебно-познавательных проблем.

**Цель исследования** изучать стили мышления будущего педагога при решении познавательных проблем.

**Научная гипотеза исследования**: Предполагается, что при условиях целенаправленного выбора и использования стилей мышления увеличится значимость

приоритетного действия (или действий) направленного на поиск информации, облегчится возможность альтернативного решения познавательных проблем.

**Задачи исследования:**

1. Пояснить особенности стилей мышления при решении учебно-познавательных проблем.
2. Исследовать особенности разных стилей мышления при решении проблем учебно-познавательного характера отдавая предпочтение особенно выбору и использованию доминирующего действия в данном стиле.
3. Выявить уверяющим научным экспериментом наличные проявления стилей мышления педагогов-студентов во время решения различных учебно-познавательных проблем.
4. Разработать и вложить специальные обучающие программы направленные на использование стилей мышления и показать эффективность их вложения в высшей образовательной системе при решении учебно-познавательных проблем.
5. Подтвердить результатами контрольного эксперимента положительное влияние использования разных стилей мышления на процесс эффективного решения задания или проблемы.

**Научная новизна исследования:** Доказывается, что динамичная система стилей мышления студентов выбравших педагогические профессии, как цельность и совокупность действий получения, накопления и разработки информации, имеет уникальные проявления, которые зависят не только от доминирующего стиля мышления, личных характерных чертей, но и от познавательной сущности и содержания данной проблемы.

**Теоретическая значимость исследования:** Выявлением особенностей стилей мышления, процессы получения, разработки и передачи информации станут более управляемыми.

**Практическая значимость диссертации:** Вложение экспериментальных результатов внесет существенные изменения в систему высшего образования, в процесс усвоение учебного материала за счет правильного выбора и использования стилей мышления.

В первой главе исследования **«Общая характеристика стилей мышления, уникальность проявления интеллекта и творческого потенциала в познавательной деятельности»** на основе анализа научной и профессиональной литературы представлена общая характеристика стилей мышления. Во второй главе диссертации **«Цель, методика и основные результаты констатирующих научных экспериментов»** представлена описание цели, общей характеристики проведения, процесса и результатов подтверждающего эксперимента. В третьем главе исследовательской работы **«Методика, процесс и основные результаты формирующего эксперимента»** представлены эксперименты формирования отдельных способностей введенных в состав стилей мышления, методика обучения раздельный действий и содержание

обучающих экспериментов. В четвертом главе диссертации **«Методика, процесс и основные результаты контрольного эксперимента»** предъявлена процесс и основные результаты контрольного эксперимента.

**Структура и объем диссертации:** Диссертация состоит из введения, четырех глав, заключений и списка использованной литературы. Диссертация изложена на 210 страницах компьютерного текста, содержит 27 таблиц, 21 рисунков и 10 графических изображений. Основные положения диссертации отражены в 6 научных публикациях.

HAKHVERDYAN NAZELI SERYOZHA

## PECULARITIES OF MANIFESTATION OF THINKING STYLES IN THE PROCESS OF MULTIVARIATE RESOLUTION OF COGNITIVE PROBLEMS

Thesis for the degree of candidate of psychological science in the speciality 19.00.01 ''General psychology, theory and history of psychology, psychology of personality''

The defense of the disertation will be held on April 1$^{st}$, 2014, at 12$^{00}$, at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: Str. Tigran Metsi 17, 0010 Yerevan.

### SUMMARY

**Research actuality:** Radical changes related to the social life manifest themselves both in educational system and in the various processes of future professionals' formation.

Substantial changes in the educational system are comparable to the new references, related to the future professionals' educational activities, in the conditions of formation and development of different styles of thinking. In this context, modernization of higher education is aimed at providing quality education to future professionals , first of all, at the activation of thinking styles.

Development of scientific or educational materials, their maintenance and future reproduction, both at schools and at the institutions of higher education, turns into a priority problem, the solution of which depends on the characteristics of students' choice of thinking styles.

**Research object** represents the processes of obtaining information from various sources, its collection, reception, as well as its development and representation on the basis of theoretical and experimental methods.

**Research subject** is the particular manifestation of the processes of the thinking styles, which is the result of the choice of multivariate solution methods, related to the educational-cognitive issues.

**The aim** of the research is to study the thinking styles of the future educators, in solving different cognitive problems.

**Scientific hypothesis of the research:** It is believed, that the purposeful selection and application of the thinking styles will highly contribute to the increase of

significance of the priority action (or actions) of the information search, as well as it will make easier the opportunities of the alternative solution of cognitive problems..

**Research issues are as follows:**

1. To clarify the characteristics of thinking styles in the solutions of educational-cognitive problems,
2. To study characteristics of different thinking styles in the solutions of educational-cognitive problems, giving preference to the choice and usage of the action, having priority
3. In the frames of verifying scientific experience identify the existing thinking style manifestation in solution of various educational-cognitive problems among the educator-students,
4. To develop and implement special training programs, that are aimed at the application and usage of thinking styles and demonstrate their high contribution to the effectiveness in the system of higher education, in the frames of solving educational-cognitive problems,
5. Due to the results of scientific testing experiments, to confirm the positive influence of implementing different styles of thinking on the effective solution process of the problem or the task .

**Novelty of scientific research**: It is being proved, that the dynamic system of the thinking styles of the students, having chosen the teaching profession, has its unique manifestation dependant not only on the exisiting dominant style of thinking and personal characteristics but also on the character and the content of the cogntitve task .

**Theoretical significance of the research:** With the identification of features of thinking styles processes of information reception, processing and transmission will become more manageable,

**Practical significance of the research**: Contribution of experimental results will implement significant changes in the system of higher education, in the learning process of educational material, due to correct choice and usage of thinking styles.

The first chapter of the research work, that is ***"General characteristics of thinking styles, originality of manifestation of intellect and creativity in the cognitive process"*** , represents general characteristics of thinking styles on the basis of scientific and professional literature analysis.. The second chapter of the dissertation, that is " ***The purpose of the confirming scientific experiments, methodology and the main results"*** , represents the description of the aim of certifying scientific experiment, the overall description of performance, as well as the process and results. The third chapter of the research work, that is ***''Methodology of educational scientific experiments, process and main results''***, represents scientific experiments, aimed at the formation of different abilities, included in the frames of the thinking styles as well as at the teaching methods of separate actions and the content of educational scientific experiments. The fourth chapter of the research work, that is ***'' Methodology of testing scientific experiments,***

***process and main results''***, represents the process and the main results of testing scientific experiments.

**Dissertation structure and volume.** The dissertation consists of an introduction, four chapters, conclusions and the list of used literature (references). The dissertation is written on 210 computer pages, contains 27 tables, 21 figures and 10 diagrams.

Main provisions of the given dissertation are reflected in 6 scientific publications.